

# ՈՐՈՇՈՒՄ

30 հունիս, 2021 թվականի № 42-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲԱԺՆԵՏՈՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 10-րդ մասով, 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, 42-րդ հոդվածի 6-րդ մասով և 67-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1964-Ա որոշման 3-րդ կետը և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի հունվարի 15-ի N 5-Լ որոշման հիման վրա «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումն ավարտված համարվելու փաստը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո թ ո շ ու մ է.

1. Հաստատել Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի հունվարի 15-ի N 5-Լ որոշման հիման վրա Ընկերություն կողմից լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները՝ համաձայն սույն որոշման N 1 հավելվածի:
2. Ընկերության կանոնադրությունում կատարել և հաստատել հետևյալ փոփոխությունները.
  - 2.1. Ընկերության կանոնադրության 4.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «4.1. «Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,694,657,092.72 (մեկ միլիարդ վեց հարյուր իննսունչորս միլիոն վեց հարյուր հիսունյոթ հազար իննսուններկու ամբողջ յոթանասուններկու հարյուրերորդական) << դրամ: Այն

բաժանված է 15,940,712 (տասնհինգ միլիոն ինը հարյուր քառասուն հազար յոթ հարյուր տասներկու) հատ սովորական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 106.31 (մեկ հարյուր վեց ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) ՀՀ դրամ անվանական արժեքով:»

3. Հանձնարարել Ընկերության գործադիր մարմնի ղեկավարին՝ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սույն որոշմամբ պայմանավորված փոփոխությունների պետական գրանցման նպատակով:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՇԻՐԻՆՅԱՆ

30 հունիս, 2021 թվականի

ք. Երևան

Հավելված 1  
Հանրային հեռարձակողի խորհրդի  
30 հունիս, 2021թ. N 42-Լ որոշման

Հաստատում եմ՝  
Հանրային հեռարձակողի  
խորհրդի նախագահ  
\_\_\_\_\_ Ա. Շիրինյան

**Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի հունվարի 15-ի N 5-Լ որոշման հիման վրա Ընկերություն կողմից լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները**

1. Տեղաբաշխված բաժնետոմսերի տեսակը՝ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր:
2. Տեղաբաշխված բաժնետոմսերի ձևը՝ ոչ փաստաթղթային բաժնետոմսեր:
3. Տեղաբաշխված բաժնետոմսերի փոխարկելիությունը՝ ոչ փոխարկելի բաժնետոմսեր:
4. Տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերող՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության միակ բաժնետեր հանդիսացող Հայաստանի Հանրապետությունը:
5. Տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման հիմք՝ Հայաստանի Հանրապետության, ի դեմս Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության միջև 2021 թվականի հունիսի 4-ին կնքված «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում գույք ներդնելու մասին թիվ 02/2021 պայմանագիրը և դրա հիման վրա Կողմերի միջև ստորագրված գույքի հանձնման-ընդունման ակտը:
6. Տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակը՝ 4,530,143.0 հատ:
7. Տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարվել են ամբողջությամբ՝ ոչ դրամական միջոցներով:
8. Տեղաբաշխված մեկ բաժնետոմսի տեղաբաշխման գինը կազմել է 106.31 ՀՀ դրամ:
9. Տեղաբաշխված մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 106.31 ՀՀ դրամ:
10. Թողարկված բոլոր լրացուցիչ բաժնետոմսերը տեղաբաշխված են: